Մկրտիչ Արմեն

Հեղնար աղբյուր

Վերջաբան

1

Այն լանջի վրա, որտեղ առաջ քաղաքի թուրքական թաղամասն էր ընկած, այժմ ոչինչ չկար: Թեև ներքևում առաջվա նման փռված էին բոստանները, իսկ դրանց ետևում լայն ու հեռու տարածված էր քաղաքը, թեև բլուրի բարձրում հեռու տարածված էր դաշտը, և հորիզոնի վրա կապույտով մշուշված կանգնած էր Արագածը, թեև ամեն ինչ թվում էր միանգամ ընդմիշտ իր տեղում հաստատված, բայց թուրքական թաղամասն այլևս գոյություն չուներ:

Դատարկված բլրալանջի վրա, պայծառ արևի տակ, ծուփ կանգնել էին օշոշներն իրենց սպիտակ պսակաթերթիկներով՝ դեղին և ուռուցիկ գլխիկների շուրջը: Լանջն ամբողջ սպիտակել էր օշոշներից: Թվում էր, թե այդ համատարած սպիտակությունը սգո սավան էր, որ փռվել էր անդարձ հեռացածների անդառնալիորեն ջնջված բնակատեղի վրա:

Երբ անցորդը կամ այցելուն վարժվում էր առաջին տպավորությանը՝ սկսում էին նկատվել նաև մանրամասնությունները: Տեղ-տեղ, գետնի քարքարոտ մասերում, օշոշները տեղի էին տվել սպիտակ ու դեղին անթառամներին: Դրանց տափակ, կոշտ գլխիկները, բաղկացած բազմաթիվ մանր ծաղիկներից, խիտ բռնել էին փոքրիկ տարածություններ: Եվ նայելիս դժվար էր լինում որոշել մեռա՞ծ էին անթառամները, թե՞ կենդանի, որովհետև դրանք միշտ սպիտակ էին կամ դեղին, կոթերը՝ միշտ գունաթափ-կանաչ, համարյա գորշ, և դրանցից միշտ բուրում էր

փշրված ժայռի հոտ:

Անթառամների հետ միատեղ բուսել էր նաև անիսոնը, որն իր գորշ երանգով և տերևների ձևով նման էր անթառամի թփիկին, կարծես նույնը լիներ, բայց առանց ծաղկի: Եվ դրանից բուրում էր ուրիշ հոտ, որը միևնույն ժամանակ համ էր հիշեցնում:

Օշոշների սպիտակ ծածկոցի տակ, գետնին ընդհուպ, ծեփ փռվել էր ճնճղապաշարը, որն ուտելի էր համարվում: Դա մի փոքրիկ կանաչ էր՝ հողից անմիջապես դուրս եկած մի քանի թարմ-կանաչ, ձվածիր տերևներով:

Բլրալանջի զանազան մասերում, հողի տակից տեղ-տեղ դուրս ցցված փոքրիկ քարերի հարավային արևոտ կողմերում, բուսել էին ուրիշ բույսեր, իսկ հյուսիսային ստվերոտ կողմերում՝ ուրիշ բույսեր: Արևի տակ կանգնած էր բարձր ավելուկը՝ կարմիր ցողունով, որ եղեգնի էր նման, և կանաչ տերևներով, որ կպցնովի էին թվում: Ցողունի ծայրին, երկարավուն թույլ փնջով, արդեն հասել էին ժանգագույն սերմերը:

Ավելուկների հետ կանգնել էին սուր փշերով ծածկված տատասկները և աղըշբանք կոչվող բարձր ու լայնաթուփ բույսը, որն ուներ շան ականջների նման կախ, դեղնավուն-սպիտակ ծաղիկներ՝ խոր բաժակներով, և թունավոր էր:

Իսկ ստվերի մեջ, գետնին ընդհուպ, բուսել էր օձի ծաղիկն իր զարմանալի թարմ-դեղին գլխիկով: Օձի նմանվում էր նրա կոթը, որ ողորկ էր, ձիգ ու սնամեջ, և երբ այն կոտրվում էր, ապա դուրս էր տալիս մի սպիտակ կաթիլ՝ երևի օձի կաթը:

Սակայն ստվերի ու խոնավության իսկական բույսը ջրակոտեմն էր, որ բսնում էր թաց տեղերում և ուտելի էր համարվում: Դա ուներ խոր կտրտված երկար տերևներ, իսկ հասունանալիս՝ շատ մանր, սպիտակ ծաղիկներ:

Ստվերի և խոնավության իսկական բույս էր նաև այն բարձր թուփը, որի անունը հիմար բույս էր նշանակում: Դրա հաստ ցողունը թարմ-կանաչ, միշտ սառը ջրով հագեցած, ուտելի էր համարվում, բայց ասվում էր, որ հիմարներն են ուտում այդ

բույսը կամ ուտողները հիմարանում են: Բավական էր այն պոկել արմատից, որպեսզի ինքնավստահ ցցված ցողունն ու պիրկ տերևներն իսկույն թուլկանային և վերածվեին կանաչ փալասի:

Բլրալանջի այն տեղերում, որտեղ այդ բույսերից ոչ մեկը չկար, գետինը ծածկված էր չափազանց մանր կանաչով, կարծես քարաքոսով, և կարծես ներկված լիներ: Այնտեղ հատ ու կենտ բսնում էր միայն սապնածաղիկն իր շյուղային բարակ կոթով, մազային բարակ, երկնագույն ճյուղավորումներով՝ դեպի ամեն կողմ, և դրանց ծայրերին գտնվող սպիտակ, շատ մանրիկ ծաղիկներով, որոնք թուփը նմանեցնում էին գնդաձև մշուշի:

Արևն իր հանդարտ պայծառությամբ տարածվել էր բլրալանջի վրա: Եվ եթե նույնիսկ արևի համատարած լույսի տակ անկարելի էր նկատել հին բնակատեղի որևէ հետք, ապա դա շնորհիվ մի բույսի, որը կոչվում էր սատանի շափալաղ՝ սատանայի ապտակ: Բույսը բաղկացած էր գետնի վրա փռված մի կամ երկու հսկայական տերևից: Թվում էր, թե քամին մի վիթխարի ծառից պոկել էր դրա առողջ ու կանաչ տերևները և թափթփել գետնին: Երբ անցորդը կամ այցելուն կռանար և ետ տաներ սատանայի ապտակի լայն ու մեծ տերևներից մեկնումեկը, դրա տակ կտեսներ հին թաղամասի որևէ հանգչող հետքը՝ ինչ-որ պատի հազիվ նկատելի հիմք, որևէ մայթից մնացած սալաքար, փշրված ափսեի մի բեկոր . . .

Սատանայի ապտակների հետ խառը բուսել էին նաև եզան լեզու կոչվող տերևները, որոնք կարծես սատանայի ապտակների մանրացած տեսակը լինեին, սակայն ողորկ և ջղուտ: Ասվում էր, թե եզան լեզուն ունի բուժիչ հատկություն: Դրա տերևները կապում էին վերքերի վրա: Սակայն դրանք դեռևս չէին լիզել սատանայի ապտակների տակ թաքնված տխուր հետքերը:

Բայց որքան էլ բազմազան լինեին բույսերն ու ծաղիկները բլրալանջի վրա, այնտեղ տիրապետողն այնուամենայնիվ օշոշների համատարած սպիտակությունն էր, որ գալով բոլոր կողմերից դեպի լանջի մեջտեղում գտնվող բավական ընդարձակ հրապարակը, շրջապատել էր այն: Հրապարակի վրա արդեն, բուսել էին ուրիշ ծաղիկներ, իսկ դրանց միջև, ճղակոտոր և վաղուց ի վեր չորացած ծառի տակ, գտնվում էր վաղուց ի վեր ցամաքած Հեղնար աղբյուրը . . .

***

Երբ բոստանների մեջտեղով անցնող ճանապարհով Գալուստը բարձրացավ բլրալանջ՝ ցրվեցին նրա այն կասկածները, թե նա գուցե չկարողանա գտնել իր մոր անվան աղբյուրը: Շրջապատի ամայության մեջ աղբյուրի գլխաքարը միակ վեր բարձրացած կետն էր և աչքի էր ընկնում դեռ հեռվից: Բլրալանջի ճանապարհով քաղաք իջնող սայլերից գյուղացիները հաճախ էին նկատում աղբյուրը և վազում էին ջուր խմելու: Սակայն տեսնելով այն ցամաքած, նայում էին հիասթափությամբ, ընթերցում էին սև գլխաքարի մեջ գրված կարմիր քարի գիրը, տարակուսում էին մի պահ, ապա շուռ գալով, վազում էին արդեն բոստանների մեջտեղի ճանապարհն իջած իրենց սայլերի հետևից:

Գալուստն ուրախացավ աղբյուրը հեշտ գտնելու համար, բայց և իսկույն թախիծը համակեց նրան: Ավելի լավ կլիներ, եթե նա մի քիչ ուշ գտներ այն, որպեսզի կարողանար տիրապետել իր վրդովված հոգուն: Չէ՞ որ այդ աղբյուրի տակ հանգչում էր հիշողության պատկերներից վաղուց ի վեր ջնջված իր մայրը . . .

Աղբյուրի մի կողմում բուսել էին կարմիր լալաները: Պայծառ, տաք, վառվում էին դրանց բաժակներն արևի տակ, ինչպես մխացող վերք: Բույլն ամբողջ՝ կարծես արյուն լիներ՝ վաղուց թափված, բայց դեռ թարմ . . .

Աղբյուրի մյուս կողմում բուսել էին ոսկեծաղիկները: Դրանց դեղնապայծառ փոքրիկ բաժակներն անչափ նման էին լալաներին, դրանք կարծես լալաներ էին, որ ոսկեծաղիկ էին դարձել, կամ արյուն էր, որ փոխարկվել էր արևի:

Ավազանի պռունգներին իրենց ոլործուն թելերն էին երկարել և իրար հյուսել գունատ-վարդագույն բաղեղները՝ իրարից հեռու վրանաձև սպիտակ ծաղիկներով: Բաղեղներն ամեն կողմից կախվել էին ավազանի պռունգներն ի վար՝ դեպի ավազանի հատակը, որ ծածկված էր պատահականորեն այնտեղ ընկած մանրիկ քարերով ու խիճով, և որի անկյուններում կար վաղուց ի վեր ցամաքած աղբյուրների անխուսափելի վկան՝ չոր, գունաթափ հողափոշին:

Քարե աստիճանները և ավազանի հատակի սալաքարերը մնացել էին անվթար, սակայն դրանց ճեղքերից դուրս էր աճել խոտը՝ կարծես ճգնելով իրարից հեռացնել քարերը:

Գալուստն իջավ ավազանը և կանգնեց մի րոպե տարակուսած՝ չգիտենալով, թե ինչից սկսել: Ապա նա մոտեցավ աղբյուրի գլխաքարին, բռնեց փայլուն, կարճ խողովակից, ստուգեց՝ չի՞ պտտվում արդյոք այն, չունի՞ որևէ գաղտնիք . . .

Խողովակը չէր պտտվում, գլխաքարը նույնպես անշարժ էր:

Գալուստ ը կռացավ դեպի հատակը:

— Էդ ի՞նչ կէնես, օղուլ . . .

Անսպասելի միջամտող ձայնից Գալուստը ցնցվեց և նայեց վերև:

Ավազանի պռունգին կանգնած էր հաջի Վարոսը:

Էդ ի՞նչ կէնես, Գալուստ ջան, կրկնեց նա՝ ճանաչելով Հեղնարի որդուն:

Եկել եմ մորս գերեզմանին տեսության, ասաց Գալուստը և նստեց ավազանի պռունգին:

Հաջին նույնպես նստեց: Գալուստը նայեց նրան: Նա գիտեր հաջու և իր մոր պատմությունը: Ձեռքը դնելով վշտից հավիտենապես կքած նրա թիկունքին, երիտասարդը հարցրեց .

— Իսկ դո՞ւ ինչ ես անում այստեղ, հաջի:

— Ե՞ս . . . Ես ամմեն օր կուգամ, կաշեմ, աղոթք կէնեմ . . . Քառսունհինգ տարեկան մարդ եմ, քսանհինգս մեղքի մեջ անցավ, հինգս՝ Երուսաղեմ էրթալ-գալուս ճամբուն, մնացած տասնըհինգ տարիս ես աղոթքով եմ անցուցե Հեղնարի մեղավոր հոգու համար: Ասպած ձենս կիմանա՞, թե չէ՝ չիտեմ: Ախր ես ավելի մեղավոր եմ . . .

Չնայած Վարոսի դեռ ոչ-ծեր հասակին, նրա մազերը բոլորովին սպիտակ էին, աչքերում չկար ոչ եռանդ, ոչ փայլ:

Հաջի, մորս հիշո՞ւմ ես, հարցրեց Գալուստը:

Ինչդ օր աշքիս առաջ կայնած էղնի, շշնջաց հաջին խուլ ձայնով:

— Ինչպիսի՞ կին էր, հաջի . . .

Հաջին ձայն չհանեց: Նա մտածկոտ նայեց ցամաք խողովակին և գլուխը կախեց: Իսկ հետո, երբ խոսեց, նրա խոսքերը Գալուստի պատասխանը չէին, այլ իր սեփական մտքերի .

— Սուրբ կնիկ էր, օղուլ . . . Սերը մեղք կսեպեր, սիրուց կտանջվեր, վերջն էլ սիրու մեղքեն ու տանջանքեն մեռավ . . . Վո՞վ կրնար մեղանչե: Աշե . . .

Մատնացույց անելով աղբյուրի գլխագիրը, հաջին, ով գիտե, քանիերորդ անգամ իր կյանքում, կարդաց:

— Հմը հիմի, օղուլ, ուրիշ, հիմի սեր ու ընտանիք իրար են միացե, ամմեն մարդ կրնա ազատ սիրե ու առնե՝ ում օր ուզենա: Մարդն ինքն է իրան գլխու տերը: Հրաշք չկա, էլ ասպած մարդոց գործերուն չի խառնվի:

Ապա մի քիչ լռելուց հետո նա ավելացրեց,

— Մեր ժամանակն ուրիշ էր: Հրաշք կար: Չե՞ս ավատա: Ում օր կպատմեմ Հեղնար ախպուրի հրաշքը՝ չի ավատա, կխնդա: Կխնդա ու կմեղանչե: Ի՞նչ կրնաս էնե: Վենձանաց խոսք է՝ մե աշքը հազար անկաջ արժե: Ըսել է՝ ինչքան կուզես, անկաջը լից՝ չի էղնի, աշքը պիտի լցվի, աշքը պիտի տեսնի, աշքը պիտի ստուգե . . .

— Իսկ եթե գան, Հեղնար աղբյուրը քանդե՞ն, հաջի, հանկարծ հարցրեց Գալուստը: Մարդու հետաքրքրությունն ամեն բանից վեր է: Ո՞վ գիտե . . .

Հաջին հուզվեց, դողդողացող ձեռքը դրեց Հեղնարի որդու ծնկանը և շշնջաց .

— Ես ինքս էլ էդ բանից շատ կվախենամ: Ըշտը էդոր հմար է, օր ամմեն օր իստեղ կուգամ, կաշեմ: Ես կսրպանեմ քանդողին, ասպած վկա, կմորթեմ տեղնուտեղը . . .

Հաջու մեռած աչքերը կենդանություն ստացան, փայլեցին կատաղությամբ: Սակայն այդ տևեց միայն մի վայրկյան, ապա դրանք նորից պղտորվեցին, ջրակալեցին, անշնչացան: Նա վեր կացավ:

— Գնո՞ւմ ես, հաջի, հարցրեց Գալուստը:

Հպը դոլ չե՞ս գա, զարմացավ հաջին:

— Ոչ, ես ուզում եմ մի քիչ ժամանակ մենակ մնալ մորս գերեզմանի մոտ . . .

Հաջին երկյուղածությամբ տեղի տվեց Գալուստի որդիական զղացմունքին և դանդաղաքայլ ու կորաքամակ հեռացավ բլրալանջով: Գալուստը հայացքով ուղեկցեց նրան, և երբ նա անհետացավ լանջի վայրէջքում, Գալուստը վեր քշտեց թևերը և սկսեց աշխատել: Գործիքներ բերած չլինելու պատճառով նա ամեն ինչ ձեռքով էր կատարում: Դա և՛ դժվար էր, և՛ շատ ժամանակ էր պահանջում: Վերջապես նա մեկ առ մեկ հանեց ծանր սալաքարերը, շարեց ավազանի պռունգին: Նա շարժվում էր մեծ զգուշությամբ՝ բացվող գաղտնիքից ոչինչ չփչացնելու համար:

Երբ ավազանի ողջ հատակը սալաքարերից մերկացավ, Գալուստն սկսեց հոգատարությամբ զննել այն: Ավազանի հատակը ծածկված էր արդեն ժանգոտած երկաթե մի պարզ սարքով: Յուրաքանչյուր սալաքարի տակ կար մի լծակ, որի ծայրը գնում էր աղբյուրի գլխաքարի տակ՝ միանալով մյուս լծակների ծայրերին: Բավական էր ոտք դնել սալաքարերից որևէ մեկի վրա, որպեսզի ղեկը սեղմվեր և իր ծայրով փակեր ջրի հոսանքը:

Գալուստը հեշտությամբ պարզեց նաև այն, թե ինչպես էր հաջողեցրել իր հայրը ջուր խմել: Սանդուղքից իջնելիս հարկավոր էր երկու ոտքերը միաժամանակ դնել երկու տարբեր սալաքարերի վրա: Այդ դեպքում դրանց տակի լծակների ծայրերը կսեղմվեին իրար և չէին բարձրանա՝ ջրի հոսանքը փակելու: Իսկ ջրի

վերջնականորեն ընդհատվելն առաջացել էր այն բանից, որ ուստան ոտքով աննկատելիորեն պտտեցրել էր ջրի անկման տեղի ծակ, կլոր քարը: Քարի տակ գտնվող երկաթաթերթը տեղափոխվել էր և կալնել ջրի անցքը: Երբ Գալուստը քարը նորից պտտեցրեց, քսան տարվա ցամաք աղբյուրից նորից հոսեց անապակ ջուրը:

Նույն վայրկյանին ավազանի պռունգից լսվեց մի բարձր, խռպոտ ճիչ .

— Յա՛ . . .

Գալուստի սիրտը կանգ առավ:

Այնտեղ նորից կանգնած էր հաջի Վարոսը: Անակնկալ տեսարանից չռած աչքերով նա անթարթ նայում էր մերթ ժանգոտ երկաթներին, մերթ վազող ջրին:

— Յա՛, կրկնեց նա և ցատկեց ավազան , Է՞ս ինչ է . . .

Առանց պատասխանելու, Գալուստը ոտքը դրեց երկաթներից մեկի վրա, ջուրն ընդհատեց, ապա նորից բաց թողեց և մոտեցավ վազող ջրին:

Բայց առանց այդ էլ, հաջին ամեն ինչ հասկացել էր: Նա շարունակում էր նայել, և ապա նորից, կարծես նոր միայն նկատելով, բացականչեց .

— Յա՛ . . .

Դողդողացող ձեռքով նա քանդեց օձիքը .

— Ըսել է՝ սո՞ւտ էր ամմեն ինչ . . . Սաղ քաղաքն ավատաց, սաղ քաղաքն ընձի ու Հեղնարին մեղդրրեց: Սերը պապանձվավ . . . Ընտանիքի օրենքը սուրբ դարցավ . . . Գյումրին . . .

Հաջու հետզհետե մարող ձայնը դարձավ անլսելի, այժմ նրա շրթունքները շարունակում էին շարժվել անբարբառ: Բայց հանկարծ նա դադարեց մրմնջալուց, արագ թեքվեց դեպի ջուրը, նայեց՝ վախենալով շրթունքները կամ ձեռքը հպել ջրին, չհավատալով ջրի անարգել հոսանքին: Ապա զույգ ձեռքերով

բռնեց գլուխը և բղավեց .

— Յա՛ . . . Ըպը կյանքըս ընչի՞ անցավ . . .

2

Արտասովոր դանդաղ, արտասովոր ծանրաքայլ գնում էին երկու կառքեր դեպի Ախուրյան: Կարծես լալիս էին ձիերի քայլերը, կարծես լալիս էին կառքերի անիվները: Նվագը, լացի պես խորն ու մղկտացող, հորդում էր կառքից և գնում էր արձագանքելու հեռու-հեռվում: Օրը վար էր եկել, արևը հասել էր երկնքի բարձր կետին, բայց կառքերը դեռ նոր էին իջնում նվիրական գետի հովիտը: Ե՞րբ էին հասնելու ջրափ, ո՞վ գի տեր . . .

Կառքերից մեկում նստած էր ուստա Մկրտչի սիրելի դաուլ-զուռնայի խումբը, նստած էր նաև Ավետիքը, որի կյանքն անցել էր կամուրջներ կառուցելով: Նա դառը թախիծով դրել էր իր թևը կառքի կողին, դրել էր երեսը թևի վրա և ունկնդրում էր:

Մյուս կառքում ոչ ոք չկար:

***

Կառքերը վերադարձան քաղաք, իսկ Ավետիքը սփռոց բաց արեց մի հով ուռենու ստվերում: Ջուրը հոսում էր սփռոցի մոտով՝ թրծելով արևի տակ դուրս պրծած դրա ծայրը:

Դաուլ-զուռնաչիների նստելու համար նա գտավ-բերեց երեք քար: Նրանց առջև դրեց ուտելիք, օղի և բաժակներ: Բացակա ուստա Մկրտչին հատկացրեց ամենալավ տեղը՝ սփռոցի գլխին, ծառի բնի տակ: Շարեց յոթ բաժակ, օղի լցեց: Ընկերների բաժակների մոտ դրեց խորոված և այլ խորտիկների ամենալավ պատառները: Ինքը նստեց սփռոցի մի կողմում լուռ, գլխահակ: Գլխահակ լսեց դաուլ-զուռնայի լացող եղանակը: Ապա երբ նվագի վերջին հնչյունները մարեցին ծառի զով սաղարթներում, նա վերցրեց իր բաժակը, խփեց ուստայի բաժակին և

ասաց .

Էս վերջի անգամն էլ առաջի կենացը կենացդ էղնի, ազիզ . . . Կյանքդ էնքան երկան էղնի, ինչքան օր, ափսոս, մահն է երկան . . .

Նա նորից բաժակ խփեց ուստայի բաժակին, խմեց: Հետո հերթով վերցրեց ուստայի օղին, Օնեսի օղին, Կարոյի օղին, Աղասու օղին, Բագրատի օղին, Սարգսի օղին շպրտեց նվիրական գետը: Ջուրն օղին տարավ:

Հետո, երբ երկրորդ անգամ լցրեց բաժակները, նա նախատինքով դիմեց ընկերներին .

— Է, մեննակ ե՞ս պիտի ծառայութուն էնեմ . . . Ռախի լցեք, ձեռքներդ խո չէ՞ ջարդե, ի՞նչ էղավ ձեզի . . .

* * *

Արևն իջավ:

Երբ Ավետիքը նայեց դեպի աննկատելիորեն բարձրացող դաշտը, դրա բարձրում ձգված բլուրի կտրվածքում նա տեսավ վերադարձող երկու կառքերը:

Ավետիքը բաժակների մեջ լցրեց ամենավերջին օղին:

— Էս վերջին անգամն էլ, վերջի կենացը կենացդ էղնի, ազիզ . . .

Եվ խմելով իր օղին, հավաքեց բոլորի լիքը բաժակները, նետեց Ախուրյան:

Կառքերը մոտեցան: Դաուլ-զուռնաչիները վեր կացան, նստեցին կառք: Նրանք նվագում էին ամենատխուր եղանակը:

Ավետիքը բարձրացավ մյուս կառքը, կանգնեց կառքի մեջ, ձայն տվեց .

— Քշե՛ք, էրթամ-անցնեմ վերջի կարմունջի վրայեն . . .

***

Ախուրյանում լողանալուց վերադարձող երեխաները ցավակցական դեմքերով լուռ հետևում էին ոտաբոբիկ ու գլխաբաց մի մարդու, որն օրորվելով գնում էր մի քանի քայլ, ապա կանգ էր առնում շեշտակի, զույգ ձեռքերով բռնում էր գլուխը և բացականչում .

— Յա՛ . . . Ըպը կյանքըս ընչի՞ անցավ . . .

1933 1935

Երևան